ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ՖԻՆՔԱ ՈՒՎԿ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55**
**Էլ. փոստ info@finca.am**
**Հաշվետվություն թիվ 1, 03.04.2024թ.**

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Հարություն Չադրյան | Վարչության անդամ, Գլխավոր իրավախորհրդատու/ Իրավաբանական վարչության ղեկավար/Կորպորատիվ քարտուղար | [signature] | 03.04.2024թ. |
| Անուշ Պետրոսյան | Վարչության անդամ, Գլխավոր Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ | [signature] | 03.04.2024թ. |
| Վարդան Հարոյան | Վարչության անդամ, Գործառնական տնօրեն | [signature] | 03.04.2024թ. |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Սթիվեն Մայքլ Հասս | Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն | [signature, stamp: «ՖԻՆՔԱ» "FINCA" 00445174] | 03-04-2024 |

03 ապրիլ 2024թ.

# Տեղեկանք

Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի 20/03/2024թ.-ի թիվ 16/2024 որոշման՝ տնօրենների խորհրդի անդամները որոշեցին.

1. Հաստատել Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գրանցումից հետո մեկ տարվա ընթացքում մինչև 3,255,000,000 (երեք միլիարդ երկու հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի թողարկումը (որից մինչև առավելագույնը 8,000,000 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալը կարող է թողարկվել ԱՄՆ դոլարով պայմանով, որ ցանկացած թողարկման պահի դրությամբ թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքը չպետք է գերազանցի և՛ 3,255,000,000 (երեք միլիարդ երկու հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը, և՛ Ընկերության կանոնադրական կապիտալը)՝ առանձին փուլերով (տրանշերով): Ընդ որում՝ դրամային պարտատոմսերի թողարկման ծավալ սահմանել ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի ծավալի առնվազն 10%-ի չափով:
2. ՀՀ դրամով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի անվանական արժեքը սահմանել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի համար՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:
3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով:
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը, արժեկտրոնների վճարումների պարբերականությունը և այլ էական պայմանները սահմանել Ընկերության Տնօրենների Խորհրդի առանձին որոշումներով:

According to resolution number 16/2024 of Board of the Directors of FINCA UCO CJSC dated 20/03/2024, the members of the Board of Directors have resolved:

1. To approve issuance of non-convertible non-documentary coupon bonds up to AMD 3,255,000,000 (three billion two hundred fifty-five million) (maximum of 8,000,000 (eight million) USD value of which can be issued in USD, provided that the residual value of the bonds at the time of any issuance should not exceed 3,255,000,000 (three billion two hundred fifty-five million) AMD and the Company's authorized capital) within a year following the registration of the Program Prospectus by the Central Bank of the RA, by semi-annual coupon payment frequency, in separate tranches. To establish the volume of bond issuance in AMD not less than 10% of the volume of bonds issued in USD.
2. To set AMD 50,000 (fifty thousand) as nominal value of each bond issued in AMD and USD 100 (one hundred) as nominal value of each bond issued in foreign currency.
3. To perform issuance and placement of bonds via "Armenian Securities Exchange" OJSC placement system in standard closed (European) auction.
4. To set term, currency, volume, profitability, *coupon payment frequency* and other material provisions of issuance and placement of each tranche by Company Board of Directors separate resolutions.